Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1-ի N 70 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացումը, այդ թվում՝ տեխնոլոգիական արդյունաբերության ստեղծումը, աջակցել գիտնականներին, երիտասարդներին, տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներին, ոչ առևտրային կազմակերպություններին և այլ անձանց կատարել ֆունդամենտալ և կիրառական հետազոտություններ, մշակումներ ու գյուտեր, օգտագործել սեփական գիտական ու հետազոտական ներուժը Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ, տեխնոլոգիական նորարարությունների համար զարգացնել միջավայր, մոբիլիզացնել հայաստանյան ու միջազգային գիտական հանրությունների գիտական, տեխնոլոգիական ու ֆինանսական ռեսուրսները, աջակցել հայկական գիտական համայնքի վերականգնմանը և գլոբալ հարթակում դրա մրցունակությանը, Հայաստանը տարածաշրջանային տեխնոլոգիական ու նորարարական կենտրոն դարձնելու նպատակով ներդնել գիտության և տեխնոլոգիայի լավագույն կրթական փորձը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից:
3.	Բարեգործ	Ֆիզիկական անձինք, ոչ առևտրային և բարեգործական կազմակերպություններ, նվիրատվություն և նվիրաբերություններ կատարողներ՝ ներառյալ Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը՝ ի դեմս հիմնադիրներ Ռուբեն Վարդանյանի, Նուբար Աֆեյանի, Արթուր Ալավերդյանի, «Այբ» կրթական հիմնադրամի և «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի:
4.	Ծրագիր կատարողը	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3) Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02662248
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, կրթություն, գիտություն

6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի իրականացման բյուջեն կկազմի 5,171,424,620 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանում և արտերկրում բնակվող հայերը, գիտության և տեխնոլոգիայի ոլորտի հետ առնչվող անձինք, Հայաստանի Հանրապետության և միջազգային գիտական համայնքի ներկայացուցիչները, գիտության, տեխնոլոգիայի և նորարարության ոլորտում ներդրումներ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ.-ի հունվարի 1-ից մինչև 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ը: Ծրագիրը լինելու է շարունակական:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման ծրագիր, որը ներկայացված է առաջիկա 2 տարվա համար:
		1. «ՖԱՍԹ կրթաթոշակ», գնահատված ծախսեր 176,400,000 դրամ. Միջոցառման շրջանակներում լավագույն հետազոտողներին և ասպիրանտներին Հայաստանի լավագույն բուհերում ուսանելու նպատակով կրթաթոշակներ կտրամադրվեն: Նախատեսվում է տրամադրել ընդհանուր առմամբ ութսուն մասնակի և ամբողջական կրթաթոշակ՝ ծածկելու մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ուսման վարձն ու այլ ծախսերը: Կանանց ներգրավվածությունն ապահովելու նպատակով հիմնադրամն առաջարկվող ութսուն կրթաթոշակներից քսանը կտրամդրի կին մասնակիցներին: Կրթաթոշակի գլխավոր նպատակներից է նաև հավելյալ արժեք ստեղծել ՀՀ տնտեսության, գիտության և տեխնոլոգիաների բնագավառում՝ աջակցելով երիտասարդ տաղանդավոր գիտնականներին: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
		2. «Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակ ներդրողների ցանց», գնահատված ծախսեր 23,275,000 դրամ. Հրեշտակ ներդրողների ցանցի ստեղծումն իրականացվել է 2018 թվականին: Նախնական փուլում

	իրականացվել է հայաստանյան ստարտափ ոլորտում պահանջվող ներդրումների ծավալի հաշվարկ, աշխարհում լայն տարածում գտած բիզնես «հրեշտակների»՝ ոչ ֆորմալ ներդրողների ցանցի հնարավոր ստեղծման վերաբերյալ հայտորոշիչ ձևավորող գնահատման հետազոտություններ: Ծրագրի նպատակն է Հայաստանում «Հրեշտակ» ներդնողների ցանցի աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	3. Գլոբալ նորարարական ֆորում, գնահատված ծախսեր 441,000,000 դրամ (այդ թվում՝ նաև տրանսպորտային, միջնորդական և լոգիստիկ այլ ծախսեր 32,185,100 դրամ, հանրային իրազեկման ծառայություններ 70,000,000 դրամ). Միջոցառման նպատակն է համագործակցության հարթակ ստեղծել տեղացի և օտարերկրյա գիտնականների, տեխնոլոգիաների ոլորտը ներկայացնող ձեռներեցների, ուսանողների և այլ ոլորտների ներկայացուցիչների համար՝ դրանով իսկ խթանելով տեխնոլոգիական ծրագրերի զարգացումը Հայաստանում և դրա սահմաններից դուրս: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	4. «Սևան Ստարտափ Սամմիթ», գնահատված ծախսեր 21,560,000 դրամ. Հիմնադրամն աջակցելու է գիտության ոլորտում ստարտափների առաջացմանը նպաստող և ձեռներեցության զարգացմանը խթանող միջավայրին՝ Սևան Ստարտափ Սամմիթին: Դրա ընթացքում ստարտափներով հանդես եկող թիմերը հնարավորություն են ունենում օրեր շարունակ շփվել, ծանոթանալ ինչպես միմյանց, այնպես էլ Հայաստանից և արտերկրից հրավիրված տարբեր ձեռնարկատերերի, մասնագետների և ներդրողների հետ: Ծրագրի նպատակն է միջոցառումը տարածաշրջանային մակարդակից համաշխարհային մակարդակի տեղափոխել, այդպիսով իսկ նպատակ ունենալով ներդրումների մեծ հոսք ուղղել Հայաստան: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	5. «ԲրեքՖԱՍԹ», գնահատված ծախսեր 26,460,000 դրամ. ԲրեքՖԱՍԹ-ը Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից յուրաքանչյուր ամիս անցկացվող միջոցառում է: Այն ստեղծվել է հիմնադրամի կողմից և նպատակ ունի ծառայելու

	որպես ձեռնարկատերերի, ուսանողների, հետազոտողների, գիտնականների և այլ մասնագետների միջև հետաքրքիր քննարկումների և նոր կապերի ստեղծման հարթակ: «ԲրեքՖԱՍԹ» միջոցառմանը յուրաքանչյուր ամիս հրավիրվում են համաշխարհային համբավ վայելող առաջնորդներ, ակնառու գիտնականներ, տեխնոլոգիական ոլորտում հաջողություններ արձանագրած ձեռներեցներ և փորձագետներ, որոնց ելույթներն ունկնդիրների համար դառնում են նոր գիտելիքի և ոգեշնչման աղբյուր: ԲրեքՖԱՍԹ-ն անցկացվում է կլոր սեղանի ձևաչափով, որի շրջանակում ներկայացվող զրույցին հաջորդում է առողջ սննդի հյուրասիրությամբ ուղեկցվող հարցուպատասխանը: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	6. «ՖԱՍԹ ցուցադրություններ», գնահատված ծախսեր 98,000,000 դրամ. ՖԱՍԹ ցուցադրությունները միջոցառումներ են, որոնք կազմակերպվում են ՖԱՍԹ-ը կազմակերպություններին, գիտակրթական հաստատություններին և ՖԱՍԹ-ի ոլորտներում մասնագիտական առումով ներգրավված անհատներին ներկայացնելու համար: Կախված լսարանից՝ արտագնա ցուցադրությունները կարող են լինել՝ **Ընդհանուր ներկայացում,** որի նպատակը ՖԱՍԹ-ի առաքելության ու տեսլականի վերաբերյալ տեղեկացնելն է. **Բիզնեսը թիրախավորող ներկայացում,** որի նպատակը ձեռնարկատիրական և ներդրողների համայնքի ներգրավումն է: Միջոցառումը խրախուսելու է ձեռներեցներին և ներդրողներին մասնակցել ՖԱՍԹ-ի ֆինանսական հնարավորություններն ընդլայնող ծրագրերին: Տեղեկատվություն կտրամադրվի նաև Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի և ներդրումային հնարավորությունների վերաբերյալ. **Գիտակրթական ոլորտը թիրախավորող ներկայացում**, որի նպատակն ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչների, ավագ և կրտսեր գիտնականների ներգրավումն է: Կբացահայտվեն նաև Հայաստանի գիտական ներուժն ու իրականացվող հետազոտությունները: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	7. «ՖԱՍԹ ճանապարհորդության և համագործակցության գրանտեր», գնահատված ծախսեր 147,000,000 դրամ. Դրամաշնորհային ծրագիրը նպատակ ունի աջակցել գիտության, տեխնոլոգիաների, ինժեներիայի և

	մաթեմատիկայի ոլորտներում հայաստանյան և միջազգային հետազոտողների միջև համագործակցությանը: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում թե՛ Հայաստանի և թե՛ միջազգային (այդ թվում՝ սփյուռքահայ) հետազոտողներին հանդիպելու իրենց գործընկերներին համատեղ գիտական նախագծերի վրա աշխատելու համար: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	8. «ՖԱՍԹ Հեքաթոններ», գնահատված ծախսեր 29,400,000 դրամ. Ծրագրի շրջանակներում ՖԱՍԹ-ը աջակցում է անցկացվելիք մի շարք Հեքաթոնների՝ դառնալով համակազմակերպիչ, ինչպես նաև նախատեսում է կազմակերպել Հեքաթոններ գիտության և տեխնոլոգիայի տարբեր ոլորտում, մասնավորապես, կենտրոնանալով արհեստական բանականության և մեքենայական ուսուցման ուղղությունների վրա: Ծրագիրը հասանելի է բոլոր հետաքրքրված անձանց և նպատակ ունի խթանել նորարարական լուծումների ստեղծմանը նշված ոլորտներում՝ կոորդինացնելով տարբեր ոլորտների մասնագետների ջանքերը և ընդգծելով համագործակցության և թիմային աշխատանքի կարևորությունը: Հաղթող թիմերը կստանան հատուկ պարգևներ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	9. «ՖԱՍԹ գործադիր կոմիտեներ», գնահատված ծախսեր 29,400,000 դրամ. Գործադիր կոմիտեները խորհրդատվական մարմիններ են, որոնցում ընդգրկված են ականավոր գիտնականներ և տեխնոլոգներ, հետազոտությունների զարգացման և արտադրության ոլորտների արհեստավարժ մասնագետներ և ղեկավար անձինք, ովքեր գործադիր տնօրինությանը տրամադրում են գիտահեն, գործնական տեղեկատվություն և ոչ պարտադիր ռազմավարական նշանակության խորհուրդներ՝ հիմնադրամի առաջնային գիտական ուղղություններով: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	10. «ՖԱՍԹ փորձուսումնական ծրագիր», գնահատված ծախսեր 29,400,000 դրամ. Ծրագիրը նպատակ ունի խթանելու գիտակրթական և արտադրության ոլորտների փոխգործակցությունը և կարիերայի զարգացման հեռանկար է տրամադրում երիտասարդ մասնագետներին: Այն համատեղում է վարպետության դասընթացներն աշխատանքի ընթացքում՝ նրանց հնարավորություն

	ընձեռելով գործնականում կիրառել իրենց ակադեմիական հմտությունները տարբեր ոլորտներում: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	11. «Առաջատար լուծումների կենտրոն», գնահատված ծախսեր 490,000,000 դրամ (այդ թվում՝ նաև հանրային իրազեկման ծառայություններ 28,646,200 դրամ). Առաջատար լուծումների կենտրոնը գիտակենտրոն ձեռնարկությունների ստեղծման և զարգացման բազմաֆունկցիոնալ հարթակ է: Ծրագրի առաջին խմբաքանակը կենտրոնանալու է տվյալների գիտության, արհեստական բանականության և մեքենայական ուսուցման վրա: Կենտրոնի նպատակն է առաջատար լուծումների և, ի վերջո, կողմնակի պրոդուկտ հանդիսացող ընկերությունների ստեղծումը: Կենտրոնը վարձելու է երիտասարդ գիտնականների և հետազոտողների նշված ոլորտներում նորարար գիտական թեզերով հանդես գալու համար: Գիտահետազոտական թիմը (թիմերը) գիտահետազոտական խնդիրների լուծման վերաբերյալ ոչ ավանդական մոտեցումներ են ստեղծելու և բարելավելու, բացահայտելու են շուկայի բացթողումները, որտեղ կարող է տեխնոլոգիական առաջընթաց գրանցվել և հեղափոխական լուծումներ է մշակելու: Հետազոտության ընթացքում մշակվելու է նախատիպ լուծում, որը կհանգեցնի նոր ընկերության ստեղծմանը: Հատուկ նախատիպի լուծման վրա աշխատող հետազոտողները մասնաբաժին կստանան կողմնակի պրոդուկտ հանդիսացող ընկերություններում կենտրոնի կողմից առաջարկվող մրցակցային աշխատավարձին ի լրումն: Կենտրոնի հետ փոխկապակցված ներդրումային կապիտալ հիմնադրամը ներդրումներ կկատարի կողմնակի պրոդուկտ հանդիսացող ընկերություններում՝ վերջիններիս աճն ապահովելու համար: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	12. «ՖԱՍԹ ստարտափ ստուդիո», գնահատված ծախսեր 83,300,000 դրամ (այդ թվում՝ նաև հանրային իրազեկման ծառայություններ 8,350,000 դրամ). Ստարտափ ստուդիոն նպատակ ունի աջակցելու գիտական և տեխնոլոգիական հիմքով ստարտափ-ներին, ինչպես նաև սկսնակ ձեռնարկատերերին, ովքեր ձգտում են հիմնել իրենց սեփական ընկերու-թյունները: Ստարտափ ստուդիոյին անդամակցությունն անվճար է: Այն ներառում է ուսուցողական ծրագրեր, մենթորություն, ինչպես նաև հասանելիություն ՖԱՍԹ-ի գրասենյակին ծրագրի ամբողջ տևողության ընթացքում: Ծրագրի ավարտին ստարտափներն ու սկսնակ ձեռնարկատերերը հնարա-

	վորություն են ստանում նաև ներկայացնելու իրենց լուծումը ՖԱՍԹ-ի կողմից ստեղծված Գիտության և տեխնոգիաներին հրեշտակների ցանցին ներդրումներ ներգրավելու նպատակով: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	13. «ՖԱՍԹ դրամաշնորհներ՝ տեղական հետազոտությունների համար», գնահատված ծախսեր 196,000,000 դրամ. Տեղական հետազոտությունների համար դրամաշնորհներ տրամադրելու գործիքը նպատակ ունի Հայաստանում գործող հետազոտողներին աջակցելու, որպեսզի վերջիններս գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում խորացված հետազոտություններ իրականացնեն: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	14. «ՖԱՍԹ մրցանակներ», գնահատված ծախսեր 82,810,000 դրամ. Մրցանակներ կշնորհվեն մարդկանց տարբեր խմբերին՝ ի գնահատում Հայաստանում նորարարությունը խրախուսելու իրենց ջանքերի: Սա թիրախավորում է գիտնականներին, դասավանդողներին, ընկերությունների ղեկավարներին, ովքեր զգալի ներդրում են ունեցել Հայաստանում գիտության ու տեխնոլոգիաների զարգացման մեջ: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	15. «Կրթական և վերապատրաստման ծրագիր ՀՀ պաշտպանության նախարարության հետ», գնահատված ծախսեր 832,510,000 դրամ. ՀՀ ՊՆ հատուկ ստորաբաժանումների զինվորների համար նախատեսված կրթական ու վերապատրաստման ծրագիր է, որը գիտակենտրոն վճռական գործողությունների ընթացքում զինում է նրանց հմտություններով և գիտելիքով: Ծրագիրն իրագործման միջնաժամկետ փուլում է՝ ՊՆ-ի հետ փոխհամաձայնեցված տեղանքով ու դասընթացի պլանով: Ծրագրի առաջին խմբաքանակը կենտրոնանալու է ISTAR-ի (հետախուզության, հսկողության, նպատակի ձեռքբերման, զինվորական հետախուզման) վրա, որի ընթացքում 30 մասնակիցներ ձեռք են բերելու 5 մասնագիտացումներ և 3 տարի հետո կգրանցվի առնվազն 100 մասնակից յուրաքանչյուր խմբաքանակում: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	16. «Երկակի կիրառման հետազոտության և մշակման ծրագիր», գնահատված ծախսեր 822,710,000 դրամ.

	Ծրագիրը խթանելու է Հայաստանում երկակի կիրառման հետազոտությունն և մշակումը՝ հզորացնելով հետազոտական խմբերն ու ընկերությունները՝ հզորությունների ստեղծման, դրամաշնորհների և ընկերությունների հիմնադրման գործընթացի միջոցով, ինչպես նաև՝ որպես անուղղակի օգուտ՝ երկարաժամկետ հեռանկարում երկրի ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանը նպաստելով: Ծրագիրը մշակման վաղ փուլում է, մշակված նախնական հայեցակարգով և նախատեսված անհրաժեշտ գործիքակազմով: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	17. «ՖԱՍԹ դրամաշնորհներ՝ գիտական և բարձր տեխնոլոգիաների վերաբերյալ միջոցառումների կազմակերպում», գնահատված ծախսեր 215,600,000 դրամ. Ծրագիրը նպատակ ունի աջակցելու Հայաստանում իրականացվող գիտության և տեխնոլոգիաների հետ առնչվող միջոցառումներին: Միջոցառումները երրորդ անձինք (գիտնականներ, ձեռներեցներ, հաստատություններ և այլն) կարող են կազմակերպել և ՖԱՍԹ-ից ստանալ ամբողջական կամ մասնակի դրամական/ ինստիտուցիոնալ աջակցություն: Սկիզբը՝ 01.01.2019 թ., ավարտը՝ 31.12.2020 թ.:
	18. Աշխատավարձի և ֆիզիկական անձանց կողմից ծառայությունների մատուցման գծով ծախսեր, այդ թվում՝ վարչական աշխատակազմի աշխատավարձ 846,012,720 դրամի և գիտական ու տեխնոլոգիական մասնագետների աշխատանքային և քաղ. իրավական ծառայություններ 80,000,000 դրամի: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	19. Տարածքների (ապրանքանյութական արժեքների պահեստավորման համար), գրասենյակների (վարչական աշատակազմի և գիտական և տեխնոլոգիական ոլորտի մասնագետների աշխատանքների համար), դրանց վերանորոգման, դիզայնի, կահավորման, ներքին հարդարման աշխատանքներ: Գրասենյակային գույքի, սարքավորումների ձեռքբերում, անվտանգության և ահազանգման համակարգերի գնում և տեղադրում, պահնորդային և այլ տեխնիկական-մասնագիտական ծառայություններ, կոմունալ վճարներ, այդ թվում՝ նաև հեռախոսակապի և ինտերնետ հասանելիության ծախսեր, տնտեսական և գրասենյակային այլ ծախսեր 204,400,000 դրամ:

	Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	20. Շարժական գույքերի վերանորոգման, ընթացիկ սպասարկման ծառայություններ 5,880,000 դրամ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	21. Խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ իրավաբանական, հաշվապահական, թարգմանչական և մասնագիտական, հետազոտական և այլ համանման ծառայություններ 93,322,000 դրամ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	22. Գործուղման ծախսեր՝ հյուրանոցային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, ավիատոմսեր և օրապահիկներ, որը նախատեսված է կազմակերպչական աշխատակազմի, ծրագրի ղեկավար անձնակազմի համար, աշխատակիցների միջազգային և տեղական գործուղումներ (ծրագրի արտասահմանյան գրասենյակներ, հանդիպումներ արտասահմանյան գործընկերների հետ, ծրագրի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման, փորձի փոխանակման նպատակով) 137,200,000 դրամ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.
	23. Տրանսպորտային ծառայություններ, վառելիք, լոգիստիկ ծախսեր, մաքսային, բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ 14,700,000 դրամ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	24. Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր, տպագրական և դիզայներական ծառայություններ, այդ թվում՝ բուկլետների, այցեքարտերի, տոմսերի, հրավիրատոմսերի, հուշանվերների և այլ փաստաթղթերի գնում/տպագրություն և ձևավորում, ՎԵԲ կայքի մշակում 29,400,000 դրամ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	25. Աշխատակազմի առողջական ապահովագրության ծախսեր 13,724,900 դրամ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:
	26. Բանկային ծառայությունների գծով ծախսեր 1,960,000 դրամ: Սկիզբ՝ 01.01.2019 թ., ավարտ՝ 31.12.2020 թ.:

		Ընդհանուր	**5,171,424,620 դրամ**
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների նկարագիրը	- Գիտական և տեխնոլոգիական մշակումներ ու գյուտեր, ֆունդամենտալ և կիրառական հետազոտություններ անցկացնելու համար անհրաժեշտ սարքավորումների, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում կամ ներմուծում 98,000,000 դրամի, ինչպես նաև անհրաժեշտ համակարգչային ծրագրային ապահովման լիցենզիաների ձեռքբերում 24,500,000 դրամի, - Միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ հյուրանոցային, բանկետային և սննդի տրամադրման, ավիատոմսերի ձեռքբերման, տարածքների վարձակալության, տեխնիկայի վարձակալության, համաժամանակյա թարգմանության, ապրանքների ձեռքբերման և ներմուծման գծով ծախսեր 525,979,200 դրամ, - Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր՝ տպագրական և դիզայներական ծառայություններ, վեբ կայքի մշակում, ապահովում 136,396,200 դրամի, - Մասնագիտական խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ թարգմանչական և մասնագիտական, հետազոտական, աուդիտորական և հաշվապահական, իրավաբանական և այլ համանման ծառայություններ 128,322,000 դրամի, - Վարչական գրասենյակների, տարածքների վարձակալություն, կոմունալ, պահնորդային, սանիտարական աշխատանքների, կապի, ինտերնետային ծառությունների վճարներ 81,900,000 դրամի, - Տրանսպորտային ծառայություններ, լոգիստիկ ծախսեր, մաքսային, բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ 46,885,100 դրամի, - Շարժական գույքերի սպասարկման, վերանորոգման ծառայություններ 5,880,000 դրամի (ի լրացում՝ շարժական գույքն արդեն իսկ գնվել է ֆիզիկական անձից):	
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	- **846,012,720 դրամ** վարչական աշխատակիցների աշխատավարձը, - **81,900,000 դրամ** գրասենյակի վարձակալություն և կոմունալ վճարներ և գրասենյակային այլ ծախսեր, - **5,880,000 դրամ** շարժական գույքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ, - **93,322,000 դրամ** խորհրդատվական ծառայություններ:	
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակեր-	Ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման հիմնադրամը համագործակցում է հետևյալ մարմինների և անձանց հետ. ՀՀ նախագահ, ՀՀ նախագահի աշխատակազմ, ՀՀ կառավարություն, ՀՀ վարչապետ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, այլ պետական և	

	պությունների հետ	տեղական ինքնակառավարման մարմիններ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ